

Y. Yulayev

Уфы физика

910.4

Y-98

1916

Հ. 8415404


ԱՅՏ ՔԵՑՄԱՐԻ ՀԱՅ

Թարգմ.
ՏԻՐԱՅՅԻ Ծ. ՎԱՐԴԱՂԵՏ

(Արտադպեթիւն Արարատ ամսագրից)

Վիճուն 20 կամաց

Ս. Հ. Ջ. Մ. Խ. Վ. Խ.
Կիբեռական Տպարան Մայր Արքունի
1916



10 NOV 2011

91014

Y-98

Ա. ՑԱՅՏԻԿ

Ա Յ Ֆ Ք Ե Յ Մ Բ Ռ Ւ Հ Զ

Թարգմ.

ՏԻՐԱՅԻՐ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ



Ա. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Ելիքտրակարգ Տպարան Մայր Արոռոյ

1916

ԱՊՐԵԼ 8

Հ Գ Դ Ա Ս Ի Գ 8 8 0

63309-67
AN

ԱՅՑ ՔԵՅՄԲՐԻԶ

Ա.

Անգղիա ճանապարհորդութեան ելնելով, ուրախ էի, որ վերջապէս պիտի տեսնեմ զասական այդ ազատութեան երկիրը, ամբողջ աշխարհի մէջ նշանաւոր նորա Խորհրդարանը (պարլամենտ), աշխարհահռչակ Բիրիտանական թանգարանը և Լօնդոնի, այդ ուժ միլիոն բնակիչ ունեցող քաղաքի, ամբողջ աշխարհի մայրաքաղաքի, ինչպէս Անգղիացիներն են սիրում անուանել նորան, այդ ահռելի քաղաքի ահռելի երթևեկը։ Բայց այդ բոլորի հետ հազիւ թէ պակաս չափով իմ մտամտուքի առարկան էր նաև Քէյմբըիջը։ Այն միտքը, թէ պիտի տեսնեմ այդ հնաւուց համալսարանական քաղաքը՝ իւր բազմաթիւ քոլէջներով և իւրատեսակ ուսանողական կեանքով, ինձ աւելի ևս էր զբաղեցնում և զրաւում։ Քէյմբըիջ գնալուս այդ ճանապարհորդութեանն անհամբեր սպասում էի վաղուց և վերջապէս սպասածս կատարուեցաւ։

1914 թուի յուլիսի 11-ին, մի քանի ընկերների ուղեցութեամբ ես մեկնեցի Լօնդոնից՝ դէպի հիւսիս, Քէյմբըիջի ուղղութեամբ։ Փափուկ պաստառով պատաժ, յարմար ու զբաւիչ երկաթուղու բաժնեկը (կուպէ), սրտազեղ ընկերակցութիւնը, ամենքն ևս Ռուսներ, վերջապէս, տպաւրութիւնների անդադար, յարափոփոխ զուգորդութիւնների շարքը և նորութիւնը՝ եօթանասուն վերստ տարածութիւնն աննկատելի դարձրին բոլորովին։ Արագ, մէկը միւսին յաջորդում էին Լօնդոնի ծխից ու մուրից սեցած շնորհը, գործարանները, գործատները, երկինք մագլցող ու ծխնելոյզներով, անվերջ ու ծիգ՝ մէկը միւսին յաջորդում, ընկնում էին մեր առաջ հայրենի Ռուսական դաշտերը յիշեցնող տեսարաններ, մեծ մասով զմրուխտ մարդագետիններ, իրենց ոչխարհների անհամար հօտերով. ապա երևացին և չքացան մի քանի փոքրիկ քաղաքներ, միա-

տեսակ-երկարաւուն շէնքերով, բաժանուած քօտէջների, և ահա, վերջապէս, մենք Քէյմբըիջ ենք:

Առաջին նուագ առանձնայատուկ ոչինչ չկայ, կայարանը՝ ինչպէս սովորական մի կայարան, լրագրական վաճառքի մանր քիոսկերով, լիքն ամբոխով, գնացքների անվերջ գնալ-գալ: Նստում ենք էլեքտրաքարշ և գնում քաղաքի կենտրոնական մասը, ուղիղ դէպի համալսարանական շէնքերը: Քաղաքն այն տպաւորութիւնն է թողնում, թէ մտել ևս գաւառական հանդարտիկ մի փոքրիկ քաղաք, մաքուր փողոցներով և տեղ-տեղ աչքի ընկնող խոշոր խանութներով: Ցուցադրանում (vitrine) իցուց են զրուած մարզանքի զգեստներ, ափուճի (lawn-tennis) թաթ, ուղնագնդի ելն: Մի խօսքով ամէն բանից երկում է, որ մարդիկ այդտեղ ապրում են բաւական տարուած մարզանքի (sport) գրգիռով:

Վերջապէս համալսարանական քոլէջներից մէկի դռանն ենք գտնւում: Ինձ ասում են, որ դա ամբողջ համալսարանը չէ, այլ նորա մի տասն և ութերորդ մասը, որովհետեւ Քէյմբըիջի համալսարանում այդպիսի քոլէջների թիւը տասն և ութն է:

Այն ինչ ամբողջի այդ մի տասն և ութերորդական մասն արդէն հոյակապ շէնքի տպաւորութիւնն է թողնում: ամբողջը քառանկիւնի, մէջտեղն ևս քառանկիւնի լայնիեկ բակով: Մեզ ընդունում է տարօրինակ տարազով մէկը, որն ինձ խսկոյն յիշեցրեց Տուրքէնկի՝ Օքսֆորդի համալսարանի համազգեստով նկարը: Կուահում եմ, որ պարոնը կամ ուսուցչապետ և կամ համալսարանի ընթացաւարտ մէկը պիտի լինի: Համազգեստը համակ սկ կտորից է: Գլխին կրում է սկ, քառակուսի ծածկոյթով մի գլխարկ, որ յիշեցնում է ուսապական ուլանների զիսանոցը, ուսերին ձգած է երկայն մի թիկնոց՝ լայն, յայտնում է մեզ՝ թարգմանչի բերնով, որ այն շէնքը, ուր այժմ գտնուում ենք մենք, կառուցուած է ժ՞Դ. գարում: Կատարեալ պատրաստականութեամբ և արտասովոր սիրալիր եղանակով իւր ծառայութիւնն է պարագարկում գիտել քոլէջի մէջ այն

ամենը, ինչ որ մեզ համար հետաքրքրական կարող է լինել: Ուսուցչապետի այդ արտակարգ սիրալիր վերաբերմունքը մեզ միանգամից մոռացնել է տալիս անգղիացիների մասին տարածուած անմերձենալիութեան մտապատկերը և մենք, առանց երկար մտմտալու, մեր դիտելու հետաբրգութեան գոհացում տալ սկսեցինք նոյն իսկ իւր՝ ուսուցչապետի բնակարանից, ուր մենք բարձրանում ենք նեղիկ, հնագարեան քարէ սանդուխտներով:

Մեր զարմանքն աւելի ևս աճեց, երբ մեր առաջ երկեցաւ փոքրիկ, պարզուկ կահ-կարասիքով զարդարուած, երեք սենեակից բաղկացած մի սեղմ բնակարան, որոնցից մէկի մէջ լիքը գրքերով պահարաններ էին զրուած և, ինչպէս երկում էր, նորա զբաղմունքների սենեակն էր, միւսը յատկացրած էր հանգստեան և քնի, իսկ երրորդը խոհանոցի և սեղանատան մի զուգորդութիւն էր: Առաջին տպաւորութիւններս այն էր, որ սեղմ ու նեղ, և գրաւչութիւնից միանգամայն զուրկ էր այդ ամենը, սակայն ով տարուած է զիտութեան սիրով, ով սիրում է սաւառնել իւր մտքի թոփչքներով վերացական հարցերի շրջանում և անցեալ ժամանակների կեանքի խորքերը սաւառնել իւր խոհերով, այդպիսի անձի համար զորանից լաւագոյն գիւրութիւններ ցանկալ իսկ դժուար է: Ամէն ինչ, ամէն բան, սկսած հնագարեան սանդուխտներից և վերջացած միջնագարեան ոճով կերտուած լուսամուտներով, այդ ամէնը կրում է հնութեան մի զրաւիչ կնիք և նիկ ողով համակում ձեզ: Զարմանում եմ, որ ուսուցչապետն առանձին սեղանատուն չունի և տեղեկանում եմ ինձ համար հետաքրքրական մի նորութեան, որ ամբողջ Քէյմբըրիջի համալսարանական կեանքի կազմի բնորոշ մի կողմն է այդ կէտը:

Ինձ ասացին, որ քոլէջի սեղանատունը հանրական է (ամուրի) ուսուցչապետների^{*)} և ուսանողների համար, որովհետեւ թէ առաջնները և թէ երկրորդները պարտա-

^{*)} Համալսարանի ընտանիքաւոր անդամներն ապրում են քոլէջների շէնքերից զուրս.

ւոր են անպատճառ բնակուել համալսարանի շենքի մէջ
և կանոնաւորապէս յաճախել ճաշերին։ Դա այն նախաւանդ
սովորութիւններից է, որ օրէնք է դարձած թէ մէկի և թէ
միւսների համար։ Մանում ենք սեղանատուն։ Մեծ, ըն-
դարձակ, երկայն մի սենեակ, որ յիշեցնում է վանական
սեղանատները։ Երկար, մեծկեկ սեղաններ, գունաւոր-
և նկարէն ապակիներով զարդարուած լուսամուտներ, պա-
տերը կիսով չափ ծածկուած արուեստակերտ, նուրբ փո-
րուածներով յեռած փայտով, նախկին վերատեսուչների,
ուսուցանողների և իւր նախկին ուսանողների, իսկ յետոյ
որ և է ակնյայտնի գործիչ դարձած անձերի իւղաներկ
պատկերներով։ Սեղանատան ճաշերը լինում են առանձին
սահմանուած կարգերով, որ բաւական արտաքին շուք և
հանդիսաւորութեան կնիք է կրում։ Երեկոյեան ժամը վեց
և կէսին տրւում է քոլլէջի զանգակը։ Բոլոր ուսուցչա-
պետներն ու ուսանողներն, իրենց երկար թիկնոցներով,
այդ ազգանշանի վերայ հաւաքւում են սեղանատուն և
բռնում իրենց տեղերը։ Ուսուցչապետները, համալսարանի-
ընթացաւարտները և ուսանողներից ոմանք, այսպէս կո-
չուած «սեղանակիցները», որ աւելի հարուստ ընտանիքի
զաւակներ են և ճաշի համար սահմանած գումարից
աւելի են վճարում, — զրաւում են իրենց տեղերն ուսուց-
չապետների սեղանի շուրջը, որ գտնւում է սենեակի
վերին բաժնում։ Միւս ուսանողները բռնում են իրենց
տեղերը մնացած երեք սեղանի շուրջը, որ զրուած է
սենեակի երկայնութեամբ, ուղղահայեաց ուսուցչապետ-
ների սեղանին։ Երբ ամենքը հաւաքւում են, ասւում է
լատիներէն աղօթք և ապա սկսում է ճաշը։ Առանձին
կարգագրիչների հսկողութեամբ, պոչազգեստ հագած
սպասիկները, սպիտակ ձեռնոցներով, մատուցանում են
կերակուրները։ Ուսանողներն, առանձին վարձատրու-
թեամբ, կարող են ստանալ անգիտական գարեջուր և
նոյն իսկ գինի. առանձին վճարումով տրւում է նոցա նաև
անուշեղէն*): Ճաշը վերջանում է։ Նորից աւում է լա-

*) Տես Պ. Գ. Միժումի յօդուածը, ճաշերի նկարագրութեան»

տիներէն գոհացողական աղօթք, ուսանողները ցրւում են,
իսկ ուսուցչապետներն անցնում են առանձին, ուսուցչա-
պետներին յատկացրած դահլիճ, ուր մի բաժակ գինի կամ
մի գաւաթիկ լիքիօր ընդունելով մի առ ժամանակ մտեր-
մական-ընկերական ժամանցով են զբաղւում։

Յանկութիւն յայտնեցինք տեսնել նաև այդ ուսուց-
չապետական սենեակը։ Երկեցաւ, որ մէկի փոխարէն նոյն
իսկ երկու դահլիճ կար։ Շատ մեծ չեն, սակայն բաւական
կոկիկ, գրաւիչ և յարմարոյն (ՅՈՒԹՈ)։ Մէկի մէջ տեղը
դրուած էր մի սեղան։ Կար փափուկ օթոցներ ու աթոռներ,
բուխարիկ և առանձին մի սարգ, որի շնորհիւ գինով լի
բաժակներն են շարժման մէջ դրւում և մատուցանուու-
ըմպողներին։

Միւս ուսուցչապետանոցում մեր ուշադրութիւնը
գրաւեց պատի մէջ մի փոքրիկ տեղ, ծածկուած ապակե-
պատ գոնակով։ Բանից երկեցաւ, որ դա նախորդ շըջանի
որմանկարի մի մնացորդն է, որ նոյնութեամբ՝ ԺԿ. դարից
պահպանւում է մինչև մեր օրերը։

Սեղանատնից յետոյ մենք այցելեցինք քոլլէջի մա-
տուռը, մեծ և երկարաւուն մի շենք, կրկնալոյս, ֆլա-
մանդական դպրոցի նկարէն և գոյնզգոյն ապակիներով
զարգարուած և պատերի երկայնութեամբ նստարաններ
դարսած։ Այստեղ, վանական աւանդական սովորութեան
համաձայն, սահմանուած դեռ ևս այն օրերից, երբ հա-
մալսարանն իսկապէս դեռ ևս վանական դպրոց էր, մինչև
այսօր իսկ անզլիկան-եկեղեցուն պատկանող բոլոր ուսա-
նողներն աղօթքի են համախմբւում։ Որովհետև ուսանող-
ների մատուռ յաճախելը պարտադիր է համարւում, ուստի
և ամեն օր աղօթելու ժողովելու ժամին բարապանը ու-
սանողների անուն-ազգանուան գէմ նշաններ է անում։
Ճակելով թերթի համապատասխան մասը ուր զրուած կամ
տպուած է ուսանողի անունը, և յետոյ, աղօթքի ժամանակ,
լոիկ մատուցանում այդ թերթն ուսուցչապետին*):

* Հյորհ. Ա. Ի. Պր.» 1912, օգոստ. 141—142 էջ. և Կլէյրերի
յօդուածը. «Եւստ. Եպր.» 1912 թ.

*) Կլէյրեր—«Քէմբբիջի համալսարանը», «Բ. Եպր.» 1890 թ.

Ապա այցելեցինք քողէջի մատենադարանը։ Մատենադարանն առանձին գարմանք չպատճառեց մեզ իւր զըրքերի մեծաքանակ չափով և այդ, անշուշտ, այն պատճառով, որ բացի իւրաքանչիւր քողէջի սեփական գրադարանից, Քէմբըթջում գոյութիւն ունի նաև ընդհաննուր համալսարանական մատենադարան, որն առանց կճարումների, ձրիապէս ստանում է Անգղիայի սահմաններում լոյս տեսած բոլոր գրքերն այնպէս, ինչպէս Ռուսաստանում այդ իրաւունքն ունին Գիտութեանց ձեմարանը և Պետրոգրադի Հասարակական Գրատունը։ Բայց մեր տեսած մատենադարանում, թէև տպագրուած գրքերի քանակը մեծ չէր, սակայն ձեռագիրների և հին վիմատիպ նկարների քանակը շատ մեծ էր, որոնց վերայ և մեզ առաջնորդողն առանձին բաւականութեամբ մեր ուշագրութիւնը հրաւերեց։ Առաջարկեց մեզ նոյն իսկ առնել մեզ հետ մի-մի թերթ՝ Ժ. Պարի գէպքի մի հսամենի վիմանկար։

Մատենադարանից անցանք լսարանը, փոքրիկ մի սենեակ, երկար նստարաններ շարած և մի սեղան՝ ամբիոնի փոխարէս։ Առաջին իսկ հայեացքից աչքի էր ընկնում լսարանի ընտանեկան բնոյթ կըող հանգամանքը և որ, կարծես, ենթադրել էր տալիս, թէ այդտեղ դասախոսութիւններ չեն կարդացւում, այն մաքով, ինչպէս մեզնում են լինում, այլ ուսուցչապետների և ուսանողների մէջ անսեթեեթ և սրտազեղ զրուցարութիւններ են լինում։ Այդտեղ, թերևս ուսանողներին դասեր են հարցնում, ինչպէս մեր դպրոցներում և ուսանողներն, անշուշտ, իրենց նոյն զրութեան մէջ են զգում, ինչպէս մեր զիմազգիաների բարձր դասարանի աշակերտները։ Պատերի վերայ գեռ և այս ու այն տեղ կախուած մնացել էին ուսանողներից ումանց նկատմամբ եղած զաւեշտական-ծաղրանկարները։ Այդ նկարներից երեսում էր, որ ուսանողներն իրենց զիտական պարապմունքների ժամանակ արտացոլել են տալիս իրենց մարզանքի վարժութիւնների հակումները, աշխատելով քննութիւնների ժամանակ ևս իրար գերազանցել և աչքի ընկնել։

Այսքանով էլ զերջացաւ առաջին քողեջի այցելու
թիւնը։ Ենելով այստեղից մենք դիմեցինք հասդարեան,
հախանորմանական ոճով կառուցած մի փոքրիկ եկեղեցի։
(The Round Church—Կող եկեղեցի)։ Իսկապէս դա եկե-
ղեցի էլ չէ, այլ մի բերդակ, որի լոյսը թափանցում է
վերն եղած լուսամուտներից։ Լուսամուտները մասը, մութ,
բաւական տարօրինակ ձևով,—ծուէնքարը (սոմքեցա, ըո-
դելօք) մէջ տեղից։ Եկեղեցի մտնելով, մենք մի տեսակ
խորհրդաւոր կիսամութի աշխարհ մտած կարծեցինք, պա-
զուկ մի բան պատեց մեզ և անզիական ու գօթական
ոճով կառուցած եկեղեցիների սովորական մթնոլորտն
զգացինք միանգամից։ Սակայն այստեղ տեսանք այն, ինչ
որ ուրիշ ոչ մի եկեղեցում չէինք հանդիպած,—այդ այն
առանձնայատուկ՝ հաստ, ցածրիկ և կոշտ, շատ կոպիտ
սիւներն էին, որ գտնւում էին եկեղեցու մէջ։ այդ սիւ-
ները եկեղեցուն մի տարօրինակ, ինքնատիպ պատկեր էին
տալիս, մասամբ յիշեցնելով Մուկուայի Բարսեղ-Երանե-
լու տաճարը *): Երեակայութիւնս արագ գործում էր և
մտքերս մի արտասովոր զուգորդութեամբ անդրադան
հսադրեան շրջանին, յարատե պատերազմների և առանձ-
նացած դղեակների ու տների պաշարումների պատկերա-
ցումներին։ Թերես այստեղ ևս, այդ եկեղեցի-բերդակի
մէջ, մի ժամանակ ապաստանել էին Սաքսերը և պաշտ-
պանուել յարձակուող թշնամու դէմ։

Թերես և նեղիկ, մանր, տարօրինակ լուսամուտները,
որոնք միայն շենքի վերին մասումն էին գտնվում, մի
ժամանակ ոչ այնքան լուսամուտների դեր են կատարել,
որքան թշնամու յարձակումների դէմ պաշտպանուելու
բերդի որմածակերի պաշտօն:

Այդ հրաշալի բանաստեղծական հնութեամբ բաւականաչափ զմայլելուց յետոյ, ենում ենք եկեղեցուց և նորա մուտքի առաջ ի վաճառ հանուած նորա աեսարանների

^{*)} Ըսդհանուր առմամբ յիշեցնում է նաև մեր «Զուարթնոց եկեղեցու» աւերակների, յատակագիծն ի նկատի առած, վերաբեր ապլածը:

բացիկներ գնելով՝ հեռանում ենք, անցնելով Արքայական քօլէջի մօտով, որ հիմնուած է ԺԵ դարում և որ, համարեա, քիչ առաջ նկարագրած քօլէջի ճիշդ նմանութիւնն է ու պատճենը, կամրջով անցնում ենք փոքրիկ, կեղտոտ, աւելի շուտ լճակի, քան գետակի նմանող Քէյմը, որից այդ նշանաւոր քաղաքն ստացել է իւր անունը (Քէյմբիջ = Քէյմի կամուրջ): Քիչ յետոյ մտանք վերջապէս Trinity (=Երրորդութեան) քօլէջը, այն քօլէջը ուր մի ժամանակ սովորել ու ապրել է Բայրոնը և ուր մի ժամանակ ուսուցչապետութեան պաշտօն է վարել մեծ Նիւտոնը: Դժուար է նկարագրել և տալ այն հիացման զգացումները, մասամբ բղխած և բարի նախանձից, որ պատեց մեղ, երբ աշքներիս առաջ կանգնած տեսանք ամբողջ աշխարհի հոչակ վայելող այդ նշանաւոր քօլէջի գեղեցիկ շնչքերը:

Հարստութիւնն ու ճոխութիւնը մի կողմից, գեղեցիութիւնն ու փառաւոր անցեալը միւս կողմից, — ակամայից մեղ ստիպեցին աւելի երկար մնալ այդտեղ, քան մեր ժամանակն էր ներում:

Վերջապէս համալսարանի գիտելին աւարտում ենք ուսանողական իւնիօն (Union) ակմբանոցով, որ ամենից աւելի է հրճուանք ազդում մեզ: Լսարանների տեսքը, համալսարանի մէջ գոյութիւն ունեցող խիստ կարգապահութեան մասին լսած պատմութիւնները, մեղ առիթ էին տալիս մի քիչ բարձրից նայել Քէմբրիջի ուսանողութեան վերայ: Մեզ այնպէս էր թւում, թէ չնայելով արտաքին բոլոր գեղեցկութեան՝ այնտեղ, ուր զլխաւոր և էական ուշադրութիւնը դարձուած է ձեւական կողմի, արտաքին կարգ ու կանոնի կատարման վերայ, ուսուցման գործը այդպիսի վայրում լուրջ լինել չէր կարող: Բայց ահա ուսանողական ակմբանոցը միանգամբ փոխեց քիչ առաջ կազմած մեր կարծիքը: Նախ պէտք է այս ասեմ, որ այդ հոյակապ ակմբանոցի ահազին դահլիճը յարանման ընդօրինակութիւնն է Լօնգոնի Պատգամաւորների պալատի: — առաջամասում գտնում է Ատենապետի (Spiker) տեղը, կողերից՝ նոյն դասաւորութեամբ, ինչպէս որ է Անգլիական

Խորհրդարանում, շարուած են կաշուէ բազկաթոռներ ակմբանոցի անդամների համար, իսկ վերը գտնուում է հասարակութեան համար վերնասրահ: Այստեղ, այդ դահլիճի մէջ, ուսանողները վարժուում են Մեծ-Բրիտանիայի քաղաքացիներ լինելու մեծ արուեստին, Բաժանուած որոշ կուսակցութիւնների, այստեղ նոքա եռանդուն կերպով քննադատութեան են առնում օրուայ քաղաքական հարցերը և այս բովից է, որ ելնում են այնպիսի ուժեղ կամքի տէր, տոկուն և աշխարհահռչակ խորհրդարանական հոետորներ և պետական գործիչներ, ինչպէս Ասկութուր, որը էղւըրդ Գրէյ և այլք:

Թէ ինչ խոշոր դեր են կատարում Անգլիայում այդ ուսանողական ակմբանոցները, երկում էի միջի այլոց և այն հանգամանքից, որ համարեա իւրաքանչիւր ուսանող պարտաւորութիւն է զգում անդամ լինելու այգպիսի մի ակմբանոցի և յաճախ, համալսարանն իսկ աւարտելուց յետոյ և որ և է հասարակական կամ պետական ասպարիզում հոչակ ստանալուց յետոյ անգամ, յաճախում են այդ ակմբանոցները և նոյնիսկ մասնակցում հարցերի խորհըրդածութեան և պարզաբանութեան վէճերին:

Ակմբանոցն այցելելուց յետոյ մենք շատ երկար պըտոյտներ ենք անում համալսարանի այգիների անվերջ ծառուղիների մէջ, դիտելով դեռ ևս ամարային արձակուրդների չգնացած և չցրուած ուսանողների վարած կեանքը: Ահա յամբաքայլ առաջ ենք զնում Քէյմ գետակի ափով, որի վերայ անդադար յետ ու առաջ են սուրում անհամար նաւակներ, մէջը լիքը պառկոտած ուսանողներով, երբեմն և օրիորդներով: Նաւակներից մի քանիսն ուղղակի ափի մօտ են կանգնեցրած և նոցանից ումանց մէջ եղածները քնած են, իսկ մէկի մէջ, ուսանողի մէկը, անհոգ դիրքով երկայնացած և ձեռները տաքաղի գրանը դրած այնպիսի գիւտական սառնասիրտ ձեռվ և դէմքով էր նայում և գիտում շուրջը եղած ամեն ինչ, որ եթէ նորա քթի տակ իսկ ոռումք պայթէր, անկարող կինէր նորա Բրիտանացու ոգուն յատուկ անտարբեր հանգստու-

թիւնը վրդովել։ Մի ուրիշ նաւակի մէջ ուսանողի մէկը վրայ պրծած ինչ որ բան էր սերտում, հաւանօքէն, քըն-նութեան պատրաստութեամբ տարուած։ Եւ նոցանից և ոչ մէկն էլ մեզ վերայ ամենափոքը ուշադրութիւն իսկ չդարձրեց։

Ահա հեռուում երեսում է մի դաշտ, ուր ուսանողներն զբաղուած են ափուճ (Lawn-Tennis) խաղալով։ Ամենքն ևս հագած են մարզարանց (Sportsmen) սպիտակ զգեստ, խաղում են արուեստորէն և կարծէք, խաղացողները ոչ սովորական ուսանողներ են, այլ մարզանքն իրենց յատուկ մասնագիտութիւն դարձրած երգուեալ մարզայրեր։ Մեզ պատմեցին, որ Քէյմբըիջում չէք գտնիլ մի ուսանող, որ մարզանքով չզբաղուէր։ Մարզանքը՝ նորա կեանքի, էութեան մի մասն է։ Նորանից ուսանողը չի հրաժարուիլ երբէք, — ոչ ամարային արձակուրդի օրերին և ոչ էլ ամենապժուար քննութեան նախօրէկին։ ամէն օր, կանոնաւոր կերպով, նա երկու ժամ մարզանքին պիտի տայ, դորան յատկացրած ժամերին, ճիշդ այնպէս, ինչպէս ամենայն օր յաճախում է ազօթքի, ամէն օր գնում է լսարաններ դասախոսութիւններ լսելու, ինձ համար ծիծադելի էր և չէի հաւատում, երբ ինձ ասացին, որ Անգլիացու համար և քաղաքականութիւնը և սովորական կեանքը տեղի են տալիս մարզանքին։ առաջին տեղը նա է բռնում։ Բայց մի անգամ առիթ ունեցայ ստուգելու այդ և ապշեցի։ Նստած սուրերկրեայ էլեքտրաքարշի մէջ նկատեցի, որ կայարաններից մէկում ներս մտաւ մեր բաժինը մի պարոն Smocking հագած, ցիլինդրով, գեղին՝ գեղեցիկ ձեռնոցներով, նստեց և բաց անելով «Times»-ը, նորա առաջին գործն եղաւ աչքի անցնել մարզանքների բաժինը։ նա առահութեամբ հետեւում էր Դարլընից ուղղած հեռագիրներին, ուր այդ ժամանակ ինչ-որ մարզանքի մրցութիւն կար և նկարագրածս պատկերը, չպէտք է մոռանալ, երովական ահոելի պատերազմի նախօրէկին էր, այդ այն օրերն էին, երբ Աւստրիան արդէն պատերազմ էր յայտարարել Սերբիային, սկսել էր Բէլգրադի ոմբակօծութիւնը և հեռագիրներն աշխարհիս

ամէն կողմերը, իրեն, Բէլգրադի անկման լուրերն էին և ի հե հացնում։

Քէյմբըիջի դիտելը վերջացրինք King College-ի (=Արքայական Քոլլէջ) այցելութեամբ և ապա զարմանալի գեղեցկութեամբ և երկայնաւուն, սրածայր բուրգերի և անսովոր ներքին վայելչութեամբ օժտուած, իւրատեսակ King Chappel-ի (=Արքայական Մատուռի) զննութեամբ, Երկար հրճում էինք անգղիական ճարտարապետութեան այդ ինքնուրոյն, քմահաճոյքի թափով, սակայն արուեստաւոր ճաշակով, կերտուած այդ շէնքերով, մինչև որ վերջապէս չը մտարեցնեցինք թէ ժամանակի կայարան դառնալու և Լոնդոն ուղեւորուելու։ Տեսածներիս և լսածներիս ամբողջի կատարեալ տպաւորութեան տակ և զլխովին դոցանով համակուած, մենք մի քանի ըոպէից արդէն կայարանումն էինք և մի հինգ ըոպէից յետոյ կըկին մեր եկած ուղին բանել։

Կարծէք վերտպարձի ճանապարհը մեզ ոչ մի նոր տպաւորութիւն պիտի չտար։ Մակայն բաղդը մեզ հետ էր և ճանապարհին՝ աւելի ևս մօտ ծանօթութիւն ստացանք Քէյմբըիջի համալսարանի մասին։ Մի անգլուհի-ուսուցչուհի, որ Երկար տարիներ ապրել էր Ռուսաստանում և լաւ ուսւերէն էր խօսում, կայարանում սուս լեզուով եղած խօսակցութիւն լսելով, հաւանօրէն, հետաքրքրութիւնից շարժուած, մեզ հետ միհենոյն բաժնեկը մտաւ և, ճանապարհին զրոյցի բռնուելով, շատ հետաքրքրական մանրամասնութիւններով մի առ մի նկարագրեց մեզ գիտական Քէյմբըիջի կեանքն ու կենցաղի կարգերը։ Հետաքրքրուած մեր այդ զրոյցով, ապագայում բազմիցս առիթ եմ ունեցել նոյն նիւթի մասին խօսել այլ և այլ անձերի հետ, որոնք քաջ ծանօթ էին Անգղիային, աչքի եմ անցրել այն սակաւաթիւ գրուածները, ինչ որ ունենք պուս լեզուով Քէյմբըիջի նկատմամբ և, ենթագրում եմ, որ այն օրերին, երբ ամենաքս ամենայն հետաքրքրութիւն անք տածում Անգղիայի նկատմամբ, տեղորդ չի լինի, եթէ ես էլ պատմեմ գիտցածուու լսածս Անգղիական

այդ ինքնատիպ համալսարանի ներքին կեանքի և կարգերի մասին*):

Բ.

Քէյմբըիջի համալսարանը հիմնուած է գեռ ևս ժՊ. դարում: Սկզբը նա մի սովորական միջնադարեան վանական տիպիք դպրոց էր, ուր և վարչութիւնը, և դասաւանդութիւնը կենդրոնացած էր, բացառապէս վանականների ձեռքում: Քոլլէջներից ամենից հինը համարւում է St.-Peter's College-ը, հիմնուած 1257 թ., որի նախատիպարն էր Oքսֆորդի Merton College-ը, և հաստատուած 1284 թ.: Ժամանակի ընթացքում, զանազան բարեգործանձերի կտակած գումարներով, հետզհետէ այդ սկզբնական դպրոցի շուրջը բուսան նոր դպրոցներ, բոլորովին կամ համարեա նման իրենց նախորդին: Այժմ, ինչպէս ասացինք, Քէյմբըիջում կայ ընդամենը տասնեռութ քոլլէջ: Կայ նոյն իսկ կանանց երկու քոլլէջ, հիմնուած մէկը 1873 թ., իսկ միւսը 1875 թուականին:

Այդ բոլոր քոլլէջներն ունին մի ընդհանուր վարչական կազմ և մի օրէնսդրական մարմին, որպիսին ներկայանում է ամբողջ Քէյմբըիջի համալսարանի համար Քէյմբըիջի ծերակոյտը (սենատ): Այդ կազմի մէջ են մտնում համալսարանի վերատեսուչը (որ կոչւում է Chancellor, չէնլըր=կանցլեր), փոխ-վերատեսուչը, համալսարանի բոլոր գիտական ուսուցչապետները (Doctor) և մագիստրոսները, նոյնպէս և համալսարանի անդամները, որ

*) Բացի անձնական դիտողութիւններից և անգլուհի-վարժուաց, ինչպէս և ուրիշներից լսածներից, ներկայ ուրուագծի համար իբրև նիւթ ունեցել եմ հետևեալ յօդուածները, — «Քէյմբըիջի համալսարանը» Ա. Եա. տպ. Բրկն. և Եֆրոնի հանրագիտ. բառարանում, Կլէյբերի յօդ. «Ե. Եպր.» 1890 թ. և Մուժուկի յօդ. «Հյոր. Ա. Ա. Արք.» 1912 թ. (մայիս, յունիս, յուլիս, օգոստոս և սեպտեմբեր):

համալսարանին տարեկան որոշ տուրք են վճարում: Ծերակոյտի անդամների թիւը սահմանափակուած չէ և, սովորաբար, մի քանի հազար է հաշւում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մի այդպիսի ծերակոյտ կարող է միայն ընդհանուր զեկավարող սկզբունքներ ու ցուցումներ տալ համալսարանի վարչութեանն իսկ այդ սկզբունքներն ու ցուցումները մարմնացնելու համար ծերակոյտի անդամների միջից ընտրում է մի առանձին յանձնաժողով, բաղկացած մօտ 500 անձից: Այդ կազմի մէջ են մտնում ուսուցչապետներ, աւանդողներ և քոլլէջի, այսպէս անուանուած, fellows (կաճառորդ): Վերջապէս այդ յանձնաժողովից ընտրում են աւելի որոշակի խմբեր, — զանազան մասնախմբեր: Համալսարանի իրաւունքների պաշտպանութեան համար Անգլիական Խորհրդարանում (Պարլամենտ) Քէյմբըիջն իրաւունք ունի իւր ծերակոյտի կողմից երկու ներկայացուցիչ ունենալ Համայնքների Խորհրդարանում:

Գործադիր իրաւունքը համալսարանում, իսկապէս, պատկանում է վերատեսչին (=չէնլըր), որ ըստ աւանդութեան ընտրում է ազնուական սերնդի և տոհմիկ անելի ներկայացուցիչներից: Բայց որովհետեւ, սովորաբար, վերատեսուչը շատ քիչ իրական մասնակցութիւն ունի համալսարանի վարչական գործի մէջ, ապա և իրապէս, և գործնականապէս համալսարանի վարչութեան գլուխ կանգնած է փոխ-վերատեսուչը (vice-chancellor): Այդ պաշտօնը համապատասխանում է մեր համալսարանների վերատեսչի (բեկտօր) պաշտօնին և ինչպէս մեզանում, յաճախ համալսարանի վերատեսուչն ընտրում է համալսարանի գեկաններից մէկը, այդպէս և այնտեղ փոխ-կանցլերն ընտրում է քոլլէջների տեսուչներից մէկը՝ երկու տարով:

Փոխ-կանցլերին օժանդակում է մի առանձին իորշուրդ, բաղկացած տասնեւեց հոգուց, և ընտրուած որոշ, սակայն ոչ-երկարատե, ժամանակի համար: Այդ խորհուրդն է որոշում և վճռում բոլոր քոլլէջներին վերաբերող ամենից աւելի խոշոր հարցերը, որ նոցա ներքին կեանքի և

կարգաւորման խնդիրներին է վերաբերում։ Եւ, վերջաշպէս, վարչական մարմինների այդ բարդ զուգորդութեամբ իրար հետ զօդուած շղթայի ծայրը վերջանում է երկու դատական-պատժական մարմնով, որոնցից իւրաքանչիւրն ունի վեց անդամ։ Դատարաններից մէկը՝ դատատուների և միւսը՝ ուսանողների համար է։

Քէյմբերիջի համալսարանի ինքնուրոյնութիւնը, համեմատած մեր ուսական համալսարանների հետ այն է, որ նա չնայած իւր հուժկու չափերին և մեծութեան, իւր պահպանութեան համար պետական գանձարանից ոչ մի նպաստ չէ ստանում։ Այս ինչ այդ ծախքերն ահագին են և շատ ահուելի մեծ չափով, քան մեր համալսարաններինը, իսկ որտեղից են այդ միջոցները։ Դոքա ժողովում են տարրեր եղանակներով։ Նախ, չպէտք է մոռանանք, որ Քէյմբերիջի համալսարանն, ինչպէս մեր առաջնակարգ գանձերն, ունին ահագին հողային կալուածներ և կայքեր։ Այդ ամենը կապալով տալով միայն, արդէն դրամական ահագին եկամուտներ է ստանում։ Երկրորդ մեծաքանակ օժանդակութիւններ տալիս են մասնաւոր անհատներ։ Ինչպէս յայտնի է, նոյն իսկ քոլեջներից շատերը կառուցուած և կանգնած են անհատական զոհաբերութիւններով,—և պէտք է այս ևս ինկատի ունենալ, որ այդ զոհաբերող անհատները, յաճախ, իրենց պարտականութիւնն են համարում ընդմիշտ ապահովել նաև այդ քոլեջների պահպանութեան բոլոր ծախքերը։

Վերջապէս, ահագին գումարներ հաւաքւում են և պարտաւորական վճարումների շնորհիւ։ Համալսարանական ընդհանուր գանձարանին որոշ վճարումներ անելու պարտաւոր են ինչպէս իւրաքանչիւր քոլեջ, նոյնպէս և ծերակոյտի իւրաքանչիւր անդամ և ամեն-մի ուսանող։ Այդուղի է մտնում նաև ուսանողների կողմից համալսարանական ուսման, քննութիւնների և գիտական աստիճան ստանալու հետ կապուած, տուած վարձատրութիւններն ու վճարած առողքերը։

Քէյմբերիջի բոլոր ասան և ութ քոլեջը միացած մի-

նելով ընդհանուր վարչական կազմով և ընդհանուր կենտրոնական գանձարանով, միաժամանակ և կարողանում են պահպաննել իրենց ներքին կատարեալ ազատութիւնը։ Իւրաքանչիւր քոլեջ է միաժամանակ նաև մի ինքնուրոյն հաստատութիւն՝ առանձին վարչական իշխանութեամբ, առանձին ուսուցչապետների և առանձին գաստիարակների (tutor) կազմով։ Իւրաքանչիւր քոլեջ ունի, նոյն իսկ իւր առանձին ներքին կանոնադրութիւնը և զատ, միւսներից տարբեր, ներքին ուսումնական կեանքի պատկեր։ Իւրաքանչիւր քոլեջի գլուխ է կանգնած տեսուչը, որ զանազան քոլեջներում կրում է տարբեր անուններ, ինչպէս, —Head, Master, President և Provost. Նա, ինչպէս և համալսարանի իւրաքանչիւր վարչական անձն՝ ընտրւում է, սակայն ցկեանս, և անպատճառ այնպիսի անձերից, որոնք ուսեն անպատճառ գիտական «վարդապետելու» աստիճան (Doctor), Բացի տեսչից իւրաքանչիւր քոլեջի մէջ նշանաւոր դեր են կատարում գաստիարակ (tutor) կոչուածները, —իրապէս՝ ուսանողների համար նոքա շատ առաւել նշանակութիւն ունեցող անհատներ են, քան նոյն իսկ ուսուցչապետները։ Իւրաքանչիւր ուսանող համալսարան մտնելով այդպիսի մի գաստիարակի խնամակալութեան տակ է մտնում, և tutor-ը մինչէ նորա համալսարան աւարտելը մնում է և է իսկապէս նորա թէ գաստիարակը, թէ վերակացուն, թէ ուսուցիչը, թէ խնամարկուն և թէ պարապմունքների ժամանակ օգնողն ու հոգատար հսկողը։ Մի խօսքով գաստիարակը, tutor-ը, ուսանողի համար ամէն ինչ է։

Համալսարանի ուսանողների շարքն անցնելու համար բաւական բարդ գործողութիւնների կարիք կայ։ Ամենից առաջ՝ համալսարան մտնելու համար, կարևոր է ունենալ Անգղիայում մշտապէս բնակութիւն հաստատած, գոնէ, երկու անձի յանձնարարական գրութիւնը։ Այդպիսի յանձնարարական գրութիւնն աւելի արժեք ունի Քէյմբերիջում, քան նոյն իսկ միջսակարգ դպրոցի աւարտման վկայականը, որովհետեւ վերջին թուղթն ունենալն անպայման պար-



տաղիր չէ։ Այդ յանձնաբարական գրութիւնները ներկայացնելուց յետոյ գալիս է համալսարանում ուսանող գրուելու (matriculation) բարդ գործողութիւնը և քոլէջի ընտրութիւնը։ Ցերեկուայ ժամը երկուս և քառասուն ըովէին նոր ուսանողներն, իրենց պաշտօնական համազգեստով, — վերը նկարագրած ուսուցչապետների թիկնոցի նման, միայն աւելի կարճ, — գալիս են համալսարան, լսում իրենց ուղղած ատենախօսութիւնը և մի առանձին թերթի վերայ ստորագրում իրենց անունները։ Այդ ստորագրութիւնը նոր ուսանողի համար միաժամանակ և այն պարտաւորութիւնների ստորագրութիւնն է, որով իւրաքանչիւրն անպայման պարտաւոր է հանդիսաւոր կերպով երաշխաւորել, որ կամենում է և պարտաւոր է հնազանգուել համալսարանի մէջ ընդունուած բոլոր կարգ ու կանոններին և խոստանում է կարեսը ուշադրութեամբ վերաբերուել դէպի փոխ-կանցլերը։ Ստորագրութիւնները ճշգելուց յետոյ, ուսանողներն առաջնորդում են համալսարանական ծերակոյտի խորհրդարանը։ Այդտեղ սկսում է դասախոսութիւնների և քոլէջների, ուսուցչապետների և դաստիարակների ընտրութեան գործը. այդ ընտրութեան մէջ նորեկը կատարեալ ազատութիւն է վայելում և պարտաւոր չէ, ինչպէս ուսանական համալսարաններում է ընդունուած, բաւականանալ միմիայն համալսարանի մէջ դասախոսող ուսուցչապետներով և նոցա դասախոսութիւնների ցանկով։ Այնտեղ, իսկապէս, գոյութիւն չունի մասնաճիւղերի բաժանումներ և ուսանողն ինքն է որոշում որոշ գիտութիւնների մի խմբակցութիւն և ինքն է ընտրում, թէ ո՞ր ուսուցչապետների մօտ պիտի լսէ այդ ամենը։ Քոլէջներից դուրս ապրող, — սովորաբար աղքատ, — ուսանողների համալսարան մտնելու և լսելու վարձատրութիւնը հաշում է տասն և հինգ ըուբլի։ միւս ուսանողներինը, քոլէջների մէջ ապրողներինը, տարեկան վարձը ոչ պակաս, քան հարիւր յիսուն ըուբլի է, այն ևս միայն համալսարան յաճախելու և լսելու վարձ։ Բացի այդ վարձատրութիւնից, ուսանողը պարտաւոր է տալ նաև որոշ գումար քոլէջի մէջ ստա-

ցած բնակարանի համար և առանձին վճար ուտելիքի համար *): Սովորաբար ուսանողը քոլէջում ունենում է մի փոքրիկ, ամբողջական բնակարան, երկու-երեք սենեակից, որ ինքն է կահաւորում և զարդարում ըստ իւր ճաշակի և միջոցների։ Եթէ կամենում է քոլէջից դուրս, մասնաւոր բնակարանում ապրել՝ ապա պարտաւոր է ապրել համալսարանի վարչութեան ծանօթ, որոշ անձնաւորութիւնների մօտ, այլապէս նա ուսանող չի համարուի։ Այդպիսի բնակարանների տանտէրերն ու տանտիրուհիները որոշ կախումն ունեն համալսարանից և կապուած են համալսարանական վարչութեան հետ որոշ պայմաններով։ միմիայն այդ պայմանների լրիւ կատարելով կարող են նոքա ուսանողանկէց ունենալու յոյս ունենալ։ Այդ պայմաններից էականները հետևեալներն են. ա) բնակարանի գոները պէտք է փակ լինին երեկոյեան ժամը 10-ից մինչև առաւտեան 6 ժամը. բ) տանտէրն իրաւունք չունի բնակարանի բանալին տալ իւր տնկէց-ուսանողի ձեռքը. դ) պարտաւոր են կանոնաւոր ցուցակ պահել՝ թէ ուսանողները բնակարանից երբ են ենում և երբ վերադառնում. դ) ճաշ կարող է տրուել ոչ աւելի քան երեք հոգու. ե) որ և է ինչոյք կամ ուրախութեան սեղան պիտի չսարքել,

*) Անգղիական համալսարաններում ուսանողական կեանքը, միւս երպական համալսարանների կեանքի հետ համեմատած շատ թանգ է։ Աղքատ ուսանողն, այնտեղ պէտք է ունենայ տարեկան առնուագն 1500—1800 ր.։ Կան ուսանողներ, որոնք իրենց ծնողներին նստում են տարեկան 10—15 հազար ըուբլի։ Իսկ ոչ շուայլ կեանք վարող, չափաւոր ապրող ուսանողի տարեկան ծախքը հաշւում է 3000 ըուբլի։ Յայտնի Սէսիլ Ռուզի թոշակառու ուսանողներն ստանում են առաջին երկու տարին 3000 ըուբլի, իսկ հետևեալ տարիները 4000 ըուբլի։ Ուսանողական կեանքի այդ ծախքն Անգղիայում աւելորդ, շուայլ կեր ու խումի, խրախճանքի վերայ չի գործադրուում, այլ կամ իւր գրադարանի վերայ, որ իւրաքանչիւր ուսանողի համար մի պահանջ է և կամ մարզանքի վերայ, որից յետ մնալը ուսանողի համար պատույ ինդիր է։ Անգղիացի ուսանողը մասնաւոր կեանքի մէջ իիստ ժուժկալ և խնայող է։ Ցոփ կեանք վարող ուսանողը Անգղիական համալսարանում չհանդուրժուող տարր է։

առանց համալսարանական իշխանութեան թոլլտութեան-
դ) պայմանների մէջ մանրամասնաբար, որոշակի նշանա-
կուած են, թէ ուսանողն ինչ կահկարասիք կարող է ստանալ
և թէ ինչ իրաւունք ունի պահանջելու տաճտէրերից և
ինչ իրաւունք չունի*):

Այդ և նման կանոնների խախտման համար համալ-
սարանական վարչութիւնը կարող է թէ ուսանողներին, և
թէ տաճտէրերին ենթարկել որոշ պատմի, օրինակ ու-
սանողներին տուփանքի ենթարկելով, իսկ տաճտէրերին
զրկելով ժամանակաւորապէս և կամ ընդմիշտ ուսանող-
տնկէց պահելու արտօնութիւնից: Այդպիսի ազգարարու-
թիւնների ենթարկուել կարող են նոյնպէս և քաղաքի վա-
ճառականները և խանութպանները, եթէ նոքա ուսանող-
ների հետ որ և է տուր և առ են արել, որ համալսարանի
կանոններով արգելուած է. համալսարանի վարչութիւնը
կարող է արգելել բոլոր ուսանողներին, որ այլ ևս ոչ մի գնում
չկատարեն այդ վաճառատնից և դա, ի հարկէ, շատ ծանր
հետևանքներ կարող է ունենալ վաճառականի կամ վաճ-
ռատան առևտրական գործերի վերաբ:

Բնակութիւն հաստատելով կամ քոլէջի մէջ և կամ
քաղաքում՝ այնպիսի անձի մօտ, որին ճանաչում է հա-
մալսարանական վարչութիւնը, ուսանողը՝ առաջնորդ ու-
նենալով իւր գաստիարակին սկսում է ապրել այն կեն-
ցաղական կանոններով, որոնց խախտելու համար նա են-
թարկուած է, ընդհանրապէս, դրամական տուփանքի: Այդ
օրէնքների պահուածութեան համար քոլէջի մէջ հակում
են դաստիարակները. իսկ քոլէջից դուրս նոցա վերայ
հակում են նաև քուուները, այսինքն աեսչի-օգնականը
իւր երկու օգնականով (pedel): **): Պրօկտօրները միշտ
իրենց ձեռքին կրում են իրենց պատուոյ և պաշտօնի

*.) Տես Պ. Միհուկ. «ՀԿՐ. Մ. Ա. Ար.», 1912 Խ.

**) Պրօկտօրին սովորաբար ուղեկցում են երկու պեղել-
ուսանողների լեզուով նոքա կոչում են «բուլոգ»:

նշանակը (թմօլեմա), — Աստուածաշունչը, որ յիշեցնող է
նոցա պարտաւորութիւնների:

Ուսանողը, ըստ պարտադիր կանոնների, պարտաւոր
է յաճախել եկեղեցի, ներկայ լինել դասախոսութիւններին,
ընդհանուր ուսանողական ճաշերին և այդ բոլորը կատա-
րել շաբաթական գոնէ հինգ ամնգամ: Այդ բոլոր վայրե-
րում նա պարտաւոր է ներկայ լինել իւր պաշտօնական
համազգեստով, այսինքն, այն թիկնոցով, որի մասին յի-
շատակուեցաւ վերը և որ նոյնն է ինչ որ ուսուցչապե-
տինը, սակայն մի քիչ աւելի կարճ: Այդ համազգեստը
պարտաւորական է թէ աղօթքներին յաճախելիս և թէ դա-
սախոսութիւններին ներկայ եղած ժամանակ և նոյն իսկ
դասախոսութիւններից յետոյ, երեկոյեան, երբ ճրագները
կվառուեն: Այդ համազգեստը կրելու պարտաւորութիւնից
ուսանողն ազատ է միայն մարզանքի ժամերին և իւր
ընակարանում: Իսկ կիւրակի և տօն օրերին համազգեստը
պարտաւորական է ամբողջ օրուայ համար:

Որպէսզի հսկողները (censores) հնարաւորութիւն ու-
նենան ճշգելու, թէ ուսանողը կանոնաւոր կերպով յաճա-
խում է դասախոսութիւններին, մացրած է մի առանձին
տեսակի յուշտգիր, ինչպիսին գոյութիւն ունի Ռուսաց
Պետական Դումայում: Ուստի և, հասկանալի է, գործնա-
կանի մէջ այնտեղ էլ են յաճախակի խուսափութեր և
օրէնքի իմաստը կատարելու խախտութեր լինում, — յա-
ճակի է պատահում, որ ուսանողը համալսարան է դալիս
լոկ այն նպատակով, որ յուշազը մէջ անունը զըէ և
յետոյ կրկին քաղաք ծլկէ:

Սակայն պէտք է արդարամտութեամբ խոստովանել,
որ դասախոսութիւններին ճնշող մեծամասնութեամբ ուսա-
նողները յաճախում են ամենայն սիրով: Եւ դա բացատրւում
է այն հանգամանքով, ի հարկէ, որ ուսանողների լսած
առարկաների շրջանը կամ շարքը կազմւում է իրենց ազատ
կամքով և ինքնարերաբար ընտրած առարկաները:

Պէտք է զանազան տեսակի դասախոսութիւններ լսել:

Ամենից առաջ, բնականաբար, ուսանողն աչքի առաջ ունի այն դասախոսութիւնները, որ կարգացնում են նորա քոլշէջում՝ ապա կան միջ-քոլշեան դասախոսութիւններ, որ կարող են լսել բոլոր քոլշների ուսանողները և, վերջապէս, կան բուն համալսարանական դասախոսութիւններ, այսինքն այնպիսիներ, որ վերաբերում են մասնագիտական առարկաների և ուսանողի բուն մասնագիտական դասընթացն են կազմում։ Բացի բուն ուսուցչապետներից, այդ դասախոսութիւնների ժամանակ իրաւունք ունին դասախոսելու նաև այսպէս կոչուած Readers [=Ընթերցողներ], Lectors, Tutors և դասաւանդողներ։ Այդ լինում է այն ժամանակ միայն, եթե համալսարանը կամ միջոցների սղութեան և կամ մի այլ պատճառով չունի ծրագրի մէջ նշանակուած առարկայի յատուկ ամբիոնի ուսուցչապետ։

Սակայն, ըստ ինքեան հասկանալի է, որ ուսանողների գլխաւոր աշխատանքներն այդքանով չեն վերջանում, — նոքա չեն բաւականանում դասախոսութիւնների կրաւորական ունկնդրութեամբ, այլ աշխատում են համալսարանի մի ամբողջ շարք քիմիական և բնագիտական աշխատանոցներում (laboratoire), թանգարաններում (museum) և ուսումնասիրութեան բաժիններում (section)։ Թէ ինչ ճոխութեամբ է օժտուած այդ կողմից համալսարանը, ցոյց կտայ միայն գլխաւոր աշխատանոցների հասարակ ցուցակը։ Քէյմբրիջի համալսարանը, որ ինչպէս յայտնի է, համարւում է բնական գիտութիւնների մի որրան, ունի հետեւալ աշխատանոցները (laboratoire), — բնագիտական, բնալուծական, աստղաբաշխական գիտարան, բուսաբանական այգի, կենդանաբանական թանգարան, համեմատական կենդանակազմի թանգարան, բուսաբանական թանգարան, երկրաբանական և երկրագիտական, հանքաբանական և այլ մի քանի մասնագիտութիւնների յատուկ ուսումնասիրութեան բաժինները^{*)}։ Բայց ինչ որ ամենից աւելի զարմա-

^{*)} Վերջին ժամանակներս, համալսարանը չափազանց ընդարձակուելով և գիտութիւնների շարքի մէջ մտնելով տնտեսագիտական և մեքենագիտական բաժինները, այդ գիտութիւնների համար ևս համապատասխան աշխատանոցներ են բացւում։

նալին է, այդ այն է, որ բնական գիտութիւնների այդ որբանում դուք կհանդիպէք հսագիտական և արուեստի թանգարանների, պատկերասրանի, արձանների, վիմագրութեան ահազին ժողովածուների, ձեռագրերի բաժնի, որոնք աւելի հետաքրքրական են լեզուաբանի, քան բնագէտի համար։ Որպէս զի կարելի լինի պատկերացները թէ որքան լուրջ ուշագրութիւն է դարձում այստեղ թանգարանների և այլ աշխատանոցների մէջ ունեցած պարապմունքների վերայ և թէ որ չափով ուսանողներն, իսկապէս, արդիւնաւոր զբաղմունքներ ունին այդ աշխատանոցներում, կարեւոր ենք համարում ուշագրութիւն դարձնել այն հանգամանքի վերայ, որ ապագայ ուսանողները դեռ ևս աշակերտական շրջանում, միջնակարգ դպրոցներում, վարժում, նախապատրաստում են այդպիսի աշխատանքների համար։

Այցելելով, ինչպէս կոնդոնի նոյնպէս և այլ տեղերի, մի շարք ստորին և միջնակարգ դպրոցներ, ես նկատել եմ, որ նոցա դպրոցների էական ինքնուրոյնութիւնն այն է, որ դասաւանդութեան հետ միշտ սերտ կապուած է գիտական աշխատանոցների մէջ գործնական պարապմունքները։ Ուսումնարաններին կից միշտ կան, թէ բնագիտական և թէ բնալուծական աշխատանոցներ։ Վորձերը ոչ միայն ինքն ուսուցիչն է ցոյց տալիս, այլ և աշակերտներն են կատարում։ Իւրաքանչիւր աշակերտ և աշակերտունի, ուսուցչի հսկողութեամբ և առաջնորդութեամբ, կատարում է ամէն տեսակի վորձնական վերլուծութիւններ և փորձեր միւսների ներկայութեամբ։

Եւ այս երկոյթը միայն բնագիտութեան և բնալուծութեան առարկաների վերաբերութեամբ չէ։ Բուսաբանութեան դասերի ժամանակ աշակերտները միշտ գործ ունեն թարմ և բնական ծաղիկների հետ, երկրաչափական դասերին նոքա զբաղուած են իրական չափակցութիւններով և յետոյ, պարտիզում՝ գետնի վերայ և կամ դասարանում, թղթի վերայ, վերաբանում են ամէն տեսակի բարձրակերտ (relief) բարտէզներ, իբրև աշխարհագրու-

թեան դասերի հետևանք։ Ամէն տեղ, ամէն քայլափոխում ինքնուրոյնութիւն և այդ ինքնուրոյն գործնէութիւնն ապագայում երեան է գալիս և համալսարանի պատերի մէջ։ Այդ ինքնուրոյնութեան զարդացման տեսակէտից ուսանողներին արտօնում է հրատարակել ամէն տեսակ ամսագրեր, լրագրեր և գրքեր։ Նոքա կարող են գրել ինչի մասին որ կամենան և ինչպէս կամենան, — ոչ մի գրաքննական հսկողութիւն։ Նոյն նպատակով և բացուած են, ուսանողական ամէն տեսակի ակմբանոցներ, ուր կազմակերպւում են ամէն տեսակի մըցութիւններ, տեղի են ունենում վէճեր և պաշտպանութիւններ, ճառեր, առօրեայ քաղաքական կեանքի ամէն տեսակի հարցեր են քննութեան առնւում և որոշումներ տեղի ունենում։ Այդ տեսակի ակմբանոցներից կյիշատակեմ մի քանիսը, — կրօնական ընկերակցութիւն, գրական ընկերութիւն, երաժշտասէրների ընկերութիւն, համառօտագրութեան (= short hand, տեղորափ) սիրողների ընկերակցութիւն, երգեցողութեան սիրողների ընկերութիւն, Union ակմբանոց ևն ևն։

Բայց, իհարկէ, ամենից աւելի մեզ զարմացնում է մարդանքների ընկերակցութիւններն ու ակմբանոցները։ Թէ ինչ դեր է կատարում մարդանքն Անգղիայում, այդ մասին արդէն խօսք եղաւ։ Բնական է, որ մարդանքի ընդհանուր սիրով տարուած երկրում, երիտասարդութիւնն առաւել ևս տարուած պիտի լինի։ Քէյմբրիջում, ինչպէս պատմում են, կարելի է մի քանի հազար մարդանքի ակումբ և ընկերակցութիւններ հաշուել, — ամէն տեսակի մըցութիւնների խմբակցութիւններ, ինչպէս վազքի, զանազան խաղերի, ոյժի, հեծանուի ընկերութիւններ, ոտքնդի (foot-bal), ափուճի (lawn-tennis), նաւակների մըցակցութեան ընկերութիւններ, հօքիյ (howkey)*) սիրողների ընկերակցութիւն ևն։

*) How-key=how և key բառերից=ցանկապատ և ձող։ Երկար ձողերի օգնութեամբ, մի ծայրը դիմար տալով գեանին, աշխատում են թռչել բարձրութիւնների վերայից։ Այդ մարդանքը շատ մեծ ընդունելութիւն է գտած։ կան յաջող թռչողներ, որ

թէ մինչ որ աստիճան ուսանողները հետաքրքրւում են մարդութիւններով, երեւում է այն հանգամանքից, որ ինչպէս որ և մեծ, խոշոր չափերով մըցակցութիւն նշանակելով՝ ամբողջ ամիսներ շարունակ խօսում և գրում են իրենց ուսանողական լրագրերի մէջ այդ մըցակցութեան մասին։ Այնպիսի մի լուր, թէ Քէյմբրիջի համալսարանի և ֆրանդիայի կամ Աւստրալիայի և կամ Զելանդիայի ուսանողութեան մէջ որ և մարդական մըցակցութիւն պիտի տեղի ունենայ, իսկան անսովոր հետաքրքրութիւն է զարթեցնում ամբողջ Անգղիայում և այդ առթիւ ամէն տեղ կարելի է հսկայական յայտարարութիւններ տեսնել*)։ Այդ նշանակալից հանգամանքի համար՝ Անգղիայի համար ամենամեծ և էական նշանակութիւն ունեցող քաղաքական դէպքերի հետ կողքէ-կողք։

Չնայելով բաղմազան հետաքրքրական շըջանին՝ անզղիական, և ի մասնաւորի Քէյմբրիջի ուսանողութիւնն, ինչպէս վկայում է Կլէյբերը, իւր պարապմունքների մէջ ցըուածութիւն չէ ցոյց տալիս, — նա ամէն բանով հետաքրքրւում է, շատ բաներով է տարւում, բայց և այնպէս վկայէ բաշխել իւր ժամանակը և իւրաքանչիւր գործ ու զբաղմունք ունի իւր որոշ, սահմանուած ժամը։ Օրուայ զբաղմունքների կարգը նորա համար շատ որոշ սահմանումն ունի և նա շատ սակաւ, այն ևս անհրաժեշտութեան դէպքում, կշեղուի այդ ընթացքից։

Առաւոտեան եկեղեցում նա երգում է աղօթքներ, յետոյ օրներգութիւն և ապա քարոզ է լսում։ Մինչև ժամը մէկը նա դասախոսութիւնների է յաճախում։ Ժամը ամենայն հեշտութեամբ ցատկում են երկու սաժէն բարձրութիւնների վրայից։ Նոյն մարդանքը կայ և մեր գիւղական երեխաների մէջ, ի հարկէ փոքր չափով և իրեն մանկական խաղ։

Ծ. Հ. բարգմ.

*) Անգղիայում լրագիր ծախողներն իրաւունք չունին լրացիր ծախելու ժամանակ բարձրածայն յայտարարել լրագրերի անուններն ու հեռագրերի բովանդակութիւնը։ Դորա փոխարէն իւրաքանչիւր լրագիր վաճառելու խցիկի մօտ կախուած է օրուայ նշանաւոր դէպքերի ցուցակը։

մէկից մինչև երկուսը նախաճաշ է, յետոյ, անհրաժեշտաբար, մարզանք: Ապա ակմբանոցներից մէկում ժամանց կամ զրոյց և ժամը վեց և կէսին ճաշ: Ճաշից յետոյ մինչև գիշերուայ ժամը տասը կամ տանն է և կամ որ է ակմբանոցում և կամ քաղաքի մէջ: Ժամը տասին պառկում են քնելու:

Օրուայ ժամաբաշխումից արդէն երկում է, որ գիտութեան, իսկապէս, այնքան էլ մեծ ժամանակ չէ տուած, ամենաշատը չորս-հինգ ժամ օրական:

Բայց դորա փոխարէն, այստեղ այնպիսի արտառոց սովորութիւն չէք նկատիլ, ինչպէս մեր ուսանողութեան մէջ, երբ նոքա քննութիւնների շրջանում ամբողջ գիշերներ նստած գլուխ են ուոցնում և անգիր սերտում այն, ինչ որ ուսումնական տարուայ մէջ կանոնաւոր պարագանքի և ամենօրեայ իւրացման եղանակով մի առանձին դժուարութիւն չէր լինի: Անգիրացի ուսանողն, ասում է Կլէյբերը, իւրացնում է գաւունթացը հեշտութեամբ, առանց յոդնածութեան և, թէկ նոքա մտաւոր հորիզոնը սովորաբար աւելի նեղ ու սահմանափակ է, քան սուսական լաւ ուսանողինը, բայց նոքա առաւելութիւնն այն է, որ ինչ որ գիտէ՝ գիտէ հիմնովին և ամուր հիմքերի վրայ է նոքա գիտութիւնը. Եւ այդ ամենը ձեռք է բերում միայն շնորհիւ այն բանի, որ այստեղ ուսանողը երբէք չէ շեղւում ընդգծուած շաւղից և եղանակից, որ ընդունուած է համալսարանում և այդ կարգերի անձեռնմխելութիւնն իրեւ սրբազն մի բան է համարւում ամենքի կողմից:

Ուսանողն այդ կեանքով ապրում է երեք տարի, համարելով իւրաքանչիւր տարին բաղկացած երեք շրջանից (семестրъ), իւրաքանչիւր 13-14 շաբաթից: Երեք տարուց յետոյ կարող է բակալաւրի (bacalauriat) քննութիւն ըսնել: Քննութիւնների պատրաստում են, սովորաբար, որոշ դասագրքերով, որոնցից մի բանիսը նոյն խակ պարտադիր են համարւում: Քննութիւնները կատարում են գուտ պաշտօնական և խիստ հանդիսաւոր կերպով և, համարեա միշտ, լինում է բացառաբար գրաւոր: Սովորաբար

արւում է տասն երկու հարց, որին քննութեան ենթարկուող գրաւոր պատասխանում է, մանրամասն կանգնելով իւրաքանչիւր հարցի վերայ և ուսանողը պարտաւորութիւն ունի տուած հարցերից գոնէ հնգին պատասխանել: Զանազան առարկաների լաւագոյն շարադրութիւնների համար արւում են շքադրամներ (medaille) և կամ դրամական օժանդակութիւն, պարգև: Քննութիւններից յետոյ ստացած գիտական աստիճանները կոչում են կամ բակալաւրի աստիճան և կամ բակալաւր տրայպոս (Tripos), այսինքն պատուակալ բակալաւր:

Ուսանողների մեծագոյն մասը, ըստ Պ. Գ. Միժուկի, չէ բաւականանում այդ առաջին գիտական աստիճանով, որովհետեւ հասարակ բակալաւրի աստիճանը՝ ունեցողի համար մի առանձին գիտական պատրաստութեան առհաւատչեայ չէ: Սովորական բակալաւրի աստիճան ունեցողը կարող է համապատասխանել մեր պետական քննութիւն տուածներից: Բայց տրայպոս բակալաւրը, իւր գիտութեամբ և պատրաստութեամբ, անկասկած, շատ աւելի բարձր է մեր այդ կարգի ուսանողից: Բայց այդ գիտական աստիճանից, Քէյմբրիջում, ինչպէս և միւս համալսարաններում, արւում է նաև մագիստրոսութեան և դօքտորութեան աստիճաններ: Սակայն այդ երկու գիտական աստիճանն ստացւում է ոչ քննութեամբ, այլ առանձին, գիտութեան մատուցած, ծառայութեան համար: Մագիստրոս դառնալու համար, բակալաւրի աստիճան ստանալուց յետոյ, համալսարանում և իւր քոլեջում պէտք է մասն այլ ևս երեք տարի: Հասկանալի է, որ այդ շրջանում պէտք է մասնագիտական պարագմունք իւր ընտրած գիտական ճիւղի մէջ, սակայն այդ զբաղմունքներն արդէն չեն անցնում այն խիստ հսկողութեան տակից, որ կար ուսանողների համար, և մագիստրոսութեան աստիճանը*) արւում է առանց քննութեան:

*) Master of Arts, որ սովորաբար համառօտագրւում է M. A.

իսկ Գօքտորութեան աստիճանը տբւում է միմիայն ընտրեալների և այն ևս առանձին, յիրաւի, գիտական կնիք կրող, աշխատութիւնների համար: Քէյմրիջի համալսարանում սովորող կանայք նոյնպէս տալիս են բոլոր քննութիւնները, սովորական եղանակով, սակայն գիտական աստիճաններ սուանալու իրաւունք չունին:

Ծատ հետաքրքրական հանդէս է գիտական աստիճաններ շնորհելու կարգը: Համալսարան աւարտած բոլոր սուանողները հաւաքրւում են համալսարանի ծերակոյտի գահին և այդեղ համալսարանի փոխ-կանցլէրը հանդիսաւոր արարողութիւններով և շքով արժանաւոր թեկնածուներին գիտական աստիճաններ է շնորհում: Կատարւում է այդ հետեւալ կերպով: Ուսանողի գաստիարակը (tutor) բռնած իւր թեկնածուի ձեռքից, բերում է փոխ-կանցլէրի առաջ և ասում:

—Dignissime Domine, Domine procancellarie et tota Academia, praesento vobis hunc juvenum, quem scio tam mōribus, quam doctrina esse idoneum ad titulum assequendum baccalaurei in artibus designati; idque tibi fide mea praesto totique Academiae.*)

Այս առելու ժամանակ սստիճան ստացողը ծունկի է գալիս: Փոխ-կանցլէրը բռնում է նորա ձեռքից և ասում:

—Auctoritate mihi commissa admitto te ad titulum baccalaurei in artibus designati, in nomine Patris et Fili et Spiritus Sancti **)

Հին ժամանակ տրայպոս բակալաւրի աստիճան տալն տառերով, իսկ գօքտորութեան աստիճանը, օր. Doctor Diviniti, == D. D. տառերով հն:

Ծ. Հ. Բ.

*) Արժանայարդ Տէր, Տէր փոխ-տեսուչ և ամբողջ ձեմարան, ներկայացնում եմ ձեղ այս երիտասարդին, որ համարում եմ, թէ ըստ բարոյականին և թէ ըստ գիտութեան՝ արժանի արուեստի (==գիտութեան) բակալաւրի աստիճանի, և այս քո և ամբողջ ձեմարանի (կանարի) առաջ հաստատում եմ պատուով:

**) Իշխանութեամբ, որ արուած է ինձ, շնորհում եմ քեզ արուեստի (==գիտութեան) բակալաւրի աստիճան, յանուն Հօր և Որդոյ և Սուրբ Հոգով:

աւելի ինքնուրոյն եղանակ է ունեցել: Ժե և ԺԶ գարում, օրինակ, այդ աստիճանը տալու ժամանակ մըցակցութիւն էր լինում, որի ժամանակ բակալաւրի աստիճան ունեցողը նստում էր եռոտանի—աթոսակի վերայ, որտեղից և ծագել այդ կոչումը tripos (=եռոտանի): Մըցակցութեան հնթարկուողին տալիս էին զանազան հարցեր, որին և պարտաւոր էր պատասխանել նա: Ժամանակի ընթացքում այդ մըցակցութիւնը երգիծական-զաւեշտական բնոյթ ընդունեց, —արտասանուում էին երգիծական ճառեր, որի ժամանակ ծագուում էին ուսանողներին և, երբեմն իսկ, համալսարանական վարչութեանը: Այդ պատճառով և այդ մըցակցութիւններին վերջ տրուեցաւ, սակայն գիտական աստիճան տալու հանդէսն ու կարգը միջին դարերից մինչեւ մեր օրերը պահպանուել է նայնութեամբ և անփոփոխ:

Գ.

Երբ օտարը, —մէկը որին քաջ ծանօթ է կրոպեկան համալսարանների ներքին կեանքն ու կարգերը, —առաջին անգամ ծանօթանում է Քէյմբըրիջի համալսարանի ներքին կարգերին, առաջին սպաւորութիւնը միշտ ի վես Քէյմբըրիջի է լինում: Խիստ ճնշող և չափազանց միասպաղու ու ձանձրալի է թւում օտար անհատին Քէյմբըրիջի ուսանողի այդ միաձև և չափած-ձեած կեանքը: Նոյն իսկ մի քանի համալսարանական կարգեր և կանոններ ուղղակի ծիծաղելի են թւում, օրինակ, թիկնոց կրելը, ձաշերին պարտադիր յաճախելու պարտաւորութիւնը ևն: Այլ կարգեր, ինչպէս, եկեղեցի յաճախելը պարտադիր կերպով, երեկոյեան պասը ժամից յետոյ քոլէջի պատերից չենելուիրաւունքը, —անշուշտընդհարումների և անկարգութիւնների տեղիքը կը տային մեզանում, եթէ այդպիսի կարգեր նաև մեր ուսանողների վթայ գրուէին: Սակայն, երբ մարդի մօտայ ծանօթանում է Քէյմբըրիջի ներքին կեանքին՝ սրաջին տհած տպաւորութիւնն իսպառ չքանում է և ակամայից սկսում ենք գնահատել և յարգել այն դրական

կողմերը, որ ունի այդ համալսարանը, իւր բոլոր ներքին կարգերի հետ:

Առաջին բանը, որ օտարին հաճելի զարմանք է պատճառում, այդ այն հանրամատչելիութիւնն է, որ իւրաքանչիւր ոք կարող է մտնել նորա շէմքից, ով գիտութեան ծարաւ է զգում: Ոչ մի հասունութեան վկայականի կարիք չկայ, — իւրաքանչիւր ոք, եթէ ցանկանում է, կարող է ազատ մտնել այստեղ: Ճիշդ է, Քէյմբըիջում ուսանելը շատ սուղ է և միջին կարողութեան ուսանողին տարեկան հազար հինգ հարիւրից մինչև երկու հազար ըուբլի է նըստում ուսանողական կեանքը, բայց այն ևս պիտի ի նկատի ունենանք, որ Անգղիական կեանքի թոփչքն ու թափն աւելի լայն է և զօրեղ, քան մերը: Կան, իհարկէ, և այլ համալսարաններ, ուր կեանքն առաւել արժան է: Քէյմբըիջի համալսարանը, չպիտի մոռանանք, ընդհանուր առմամբ ազնուականութեան համալսարան է և այստեղ, ըստ ինքեան, ժողովում է և հարուստ ուսանողութեան խաւ: Այն հանգամանքը, որ Քէյմբըիջի համալսարան մտնողներից չէ պահանջում այնպիսի կրթական վարկ, որպիսին մեր հասունութեան վկայական ստանան է տալիս, ամենին չէ իջեցնում համալսարանական գիտական աշխատութիւնների մակերեսոյթը, որովհետև այստեղ, ինչպէս վերը յիշատակեցինք, կարդացւում են զանազան տեսակի դասախոսութիւններ և, չպէտք է աչքաթող առնել և այն, որ դաստիարակն (tutor) ևս, որի ինամքին է յանձնուում ուսանողը, իւր առաջին պարտաւորութիւնն է համարում լրացնել և ամբողջացնել իւր սանի կրթական բացերը, որոնք նորա յառաջադիմութեան և գիտութեամբ զբաղուելու խանգարող հանգամանքներ կարող էին դառնալ:

Սակայն, Քէյմբըիջի համալսարանի հիմնական ձդտումն այդ չէ: Էական ինդիրը գիտնականութիւնը չէ, այլ դաստիարակուած լինելը: Ուսանողից «մարդ ստեղծել»ն է, կամ ինչպէս Հ. Լուրիցին է ասում, գարձնել նորան «սո հոմմե» և նորանից ջէնտլման (ազնուորդի) կերտելն է ըստ ամենայնի, — ահա թէ ինչ է համալսարանի ամբողջ

ջանքն ու ձգտումը: Անհրաժեշտ է կրթուող երիտասարդ սերնդի մէջ ստեղծել ոչ միայն կրթուած Անգղիացուն յատուկ աշխարհայեցողութիւն, այլ և տալ, պատուաստել նորան կիրթ և ազնիւ սովորութիւններ, դաստիարակել նորա մէջ ներքին, հոգեկան պահանջ դարձող կարգաւորութիւն ու կարգապահութիւն, յարգանք դէպի իւր հայրենի երկիրն ու նախնիքների աւանդները, և որ ամենից աւելին է, — մշակել նորա մէջ զգացումների առոյց և զգաստ վիճակ, մարմնական ոյժ և կորով, անհատական կարծիքների անկախութիւն և աշխատանքի ինքնուրոյն սուբյեկտիւն: Միմիայն այդ պայմանների շնորհիւ, ըստ անգղիական հասկացողութեան, կարող էնորանից կատարեալ ազնուորդի (ջէնտլման) ենել, բառի լաւագոյն իմաստով:

Այդ նկատումներով և պահպանուում են ու գոյութիւն ունին, անշուշտ, այն ըստ երեսոյթին խիստ կարգերը, որ մեր աչքին աւելորդ և աննպատակ են երեսում: Սակայն այստեղ, առաւել քան մի այլ վայրում, կարողանում են զարգացնել անհատականութիւն՝ ներդաշնակ և կշռած թափով: Գիտութիւններն այստեղ գիտական պաշար են տալիս ուսանողին և նորա աշխարհայեցքն են կերտում, կարգերն ու կեանքի որոշակի և անսայթաք ուղին կրթում են նորա ընաւորութիւնը և կամքի ոյժը, մարգանքն ու խաղերը պահպանում են նորա առողջութիւնը և ոյժը զարգացնում, — և այդ բոլորի հետեանքն է լինում այն, որ երկիրն ստանում է առոյց, եռանդուն, կենդանի և կենսուրախ քաղաքացիներ, անվերապահ նուիրուած իրենց հայրենիքին և միշտ պատրաստ ի սէր այդ հայրենիքի յանձն առնել ամենազաժան աշխատանք և նեղութիւն, կատարելապէս վստահ իրենց ոյժերին և ոչ մի դժուարութիւն ու արգելք աչքի տուած չունենալով:

Քէյմբըիջի համալսարանական կեանքը մի այլ գրաւիչ կողմ ևս ունի, որ մեզ՝ օտարներիս համար, անհասկանալի, քիչ ծանօթ և օտար է միանգամայն: Մինչդեռ մեզնում համալսարանում, նոյն իսկ նորա փոքր կազմակերպութեամբ, կատարեալ անջատումն է նկատուում եղած մասնաճիւղերի,

նոյն իսկ նոյն մասնագիտութեան պատկանող ուսուցչապետների մէջ, ինչպէս և ուսանողների մէջ, Քէյմբրիջի համալսարանում դորա բոլորովին հակառակն ենք տեսնում։ Քէյմբրիջի համալսարանը, չնայած իւր կատարեալինք նավարութեան, մի ընկերական, իրար հետ սերտ և սիրով կապուած անդամների համախմբակցութիւն է կազմում, թէ ուսուցչապետների և թէ ուսանողների նկատմամբ։ Նոյա մէջ չկայ անջատականութեան ոգի, միատեսակ շահերը, կատարեալ ինքնավարութիւնը և փոխադարձ հաւատն ու վստահութիւնն այն գեղեցիկ շաղախն են կազմում, որ ի մի է ձուլում և զօդում Քէյմբրիջի համալսարանի բոլոր գիտական խաւերն ու հոսանքները, եւ կարելի է հաստապէս ասել, որ եթէ մեզ, օտարներիս համար, կայ Քէյմբրիջի մէջ շատ բան, որ մենք չենք ընդունիլ, որ շատ անգամ մեր ժպիտը կը յարուցանէր, ապա միւս կողմից, կան և այնպիսի շատ ու շատ բաներ, որ մեր առանձին ուշադրութեան և ուսումնասիրութեան նիւթ պիտի լինին։ Մի համալսարան, որ գոյութիւն ունի ժԿ գարից ի վեր և որ տուել է այնպիսի մեծ գիտնականներ, ինչպէս Բէկլըն, Նիւթըն և Դարուեն, այնպիսի «համաշխարհային իշխան խոհերի», ինչպէս Բալրոնը և այնպիսի «ջէնտըլման-արքայ», որպիսին էր Էպուարդ Է., անշուշտ, սիրելի և ուշագրաւ պիտի լինի ոչ միայն անգղիպիցների համար, այլ և իւրաքանչիւր կրթուած մարդու համար։



11.961